

ՀՈԴՎԱԾՆԵՐ С Т А Т Ы И

ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 250-ԱՄՅԱԿԸ

250-ԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ

Պրոֆ. Գ. Գ. ԿՈՄԿՈՎ

1974 թ. լրացավ երկրի բարձրագույն գիտական հաստատության՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250 տարին: Նրա քառորդ հազարամյա պատմությունը հայրենական գիտության ամրապնդման համար պայքարի դրժվարին ճանապարհ էր, ակադեմիայի գիտնականների կատարած մեծաթեք հայտնագործությունների ժամանակաշրջան, հայտնագործություններ, որոնք հարստացրեցին համաշխարհային քաղաքակրթությունը: Գիտությունների ակադեմիայի տոհմաբանությունը հասնում է մինչև դարերի խորքը: Նրա բստեղծումը պայմանավորված էր Ռուսաստանի զարգացման ողջ բնական ընթացքով և հանդիսացավ էկոնոմիկայի և կուլտուրայի առաջընթացի արդյունքը: Հայրենական արդյունաբերության զարգացման պահանջները, բանակի կատարելագործումը, ռազմական և առևտրական նավատորմի ստեղծումը, միջազգային կապերի ընդլայնումը հրամայաբար թելադրում էին հատկապես գիտական սլրորլեմների մշակմամբ զբաղվող հաստատություն կազմակերպելու անհրաժեշտությունը: XVIII դարի առաջին և երկրորդ քառորդների սահմանազլխին ս:յդ խնդիրը հաջողությամբ լուծվեց: Ակադեմիայի խանձարուրի մոտ կանգնած էր իր ժամանակի ականավոր պետական գործիչ Պետրոս I-ը: Լինելով լայն մտահորիզոնի, անսպառ եռանդի տեր մարդ, վճռական ռեֆորմատոր, նա լավ էր հասկանում լուսավորության ու գիտության նշանակությունը հետամնաց Ռուսաստանի բարեփոխության գործում (դրանց մեջ նա տեսնում էր նաև աբսոլյուտիստական իշխանության ամրապնդման, ազնրվականության և վանճառականության շահերի պաշտպանության միջոց): 1724 թ. հունվարի 28-ին (փետրվարի 8-ին) Սենատը, Պետրոս I-ի հավանությանն արժանացած նախագծի հիման վրա հրամանագիր է արձակում Ռուսաստանում գիտությունների ակադեմիա հիմնադրելու մասին: Այդ վավերագրով կարգադրվում էր «...ստեղծել Ակադեմիա, որտեղ սովորելու էին լեզուներ, ինչպես նաև այլ գիտություններ ու գեղեցիկ արվեստներ և թարգմանելու էին գրքեր»¹: Ակադեմիայի ստեղծումը պետրոսյան բարեփոխումների շղթայի վերջին օղակն էր, դրանց, այսպես ասած, ավարտը: Ռուսաստանն իր սեղր գրավեց աշխարհում ոչ միայն որպես հզոր ուղղմական տերություն, այլև որպես արագ զարգացող կուլտուրա ունեցող երկիր: Պետրոս I-ին չհաջողվեց տեսնել իր «զավակին». Ակադեմիայի հիմնադրման մասին

¹ См. Г. А. Князев, А. В. Кольцов. Краткий очерк истории Академии наук, М.—Л., 1957, էջ 10:

Հրամանագիրն ստորագրվելուց մեկ տարի անց նա մեռավ: Ակադեմիայի բացումը տեղի ունեցավ 1725 թ. դեկտեմբերին Պետերբուրգում: Ակզբում այն կոչվում էր Գիտությունների և գեղարվեստների ակադեմիա: Ռուսաստանի գիտական կենտրոնի կառուցվածքն ուներ իր առանձնահատկությունները: Ակադեմիայի կազմում կային երեք բաժիններ՝ մաթեմատիկական, ֆիզիկական և հումանիտար գիտությունների²: Ի տարբերություն Արևմուտքի համանման հաստատությունների, ուսական Ակադեմիան աստվածաբանությամբ չէր պարզվում: Նրա բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ հետադոտական աշխատանքները միավորում էր ուսումնական խնդիրների հետ: Ակադեմիայի հիմնարկություններում տեսական պրոբլեմների ուսումնասիրությունը պարզապես պատրաստվում էին գիտական աշխատողների կողմից:

Առաջին տասնամյակների ընթացքում Ակադեմիայի կազմը ձևավորվում էր զլխավորապես արտասահմանից հրավիրված գիտնականներից: Նրանցից շատերը քիչ բան չարեցին ուսական գիտության համար: Ակադեմիայի գործունեության մեջ պայծառ հետք են թողել մաթեմատիկոս և ֆիզիկոս Լ. էյլերը, մաթեմատիկոս և մեխանիկ Գ. Բեռնուլլին, պատմաբան Գ. Ֆ. Միլլերը և ուրիշներ: Միայն արտասահմանից հրավիրվածների մեջ քիչ չէին նաև հակագիտական զաղափարներ բարոգող ինքնակոչները, որոնք ձգտում էին դանդաղեցնել ուս գիտական մտքի զարգացումը և հետապնդում էին շահագործական նպատակներ: Բայց օտարերկրացիների անբաժան տիրապետությունը երկար չտևեց: Ժողովրդական տաղանդի հզոր ուժերը աճեցրեցին ականավոր ուս գիտնականների մի համապատասխանություն: Ակադեմիան համարվեց հայրենի տաղանդավոր գիտնականներով: Պատմությունը լիովին հաստատեց լոմոնոսովյան տողերի իրավացիությունը՝ «что может собственных Платонов и быстрых разумом Невтонов Российская земля рождать»:

1742 թ. Ակադեմիա եկավ Մ. Վ. Լոմոնոսովը: Նրա անվան հետ է կապված երկրի կուլտուրական վերանորոգման համար մղված լարված պայքարի մի ողջ դարաշրջան: Լոմոնոսովը հանդես եկավ որպես լուսավորության նոր զաղափարների ջատագով, հուշակեց գիտության և պրակտիկայի միասնության սկզբունքը: Մ. Վ. Լոմոնոսովի նախաձեռնությամբ 1755 թ. հիմնադրվեց Մոսկվայի համալսարանը: Գիտությունների ակադեմիայի գործունեության մեջ անջնջելի հետք է թողել այդ էնցիկլոպեդիստ-գիտնականը, իր հայտնագործություններով հարստացնելով գիտության բոլոր բնագավառները: Նա պարզվում էր ֆիզիկայով, բիմիայով, աստղագիտությամբ, աշխարհագրությամբ, պատմությամբ, բանաստեղծություններ էր գրում, շնորհալի նկարիչ էր: Մ. Վ. Լոմոնոսովի բազմակողմանի աշխատությունները հայրենի գիտությանը փառք բերեցին³:

XVIII դարում Ակադեմիան աստիճանաբար զառնում է երկրի գիտական կյանքի կենտրոնը: Այստեղ հավաքված էր շնորհալի գիտնականների մի խումբ: Նրանց աշխատանքները նախանշում էին գիտական առաջընթացի:

² Е. С. Кулябко, М. В. Ломоносов и учебная деятельность Петербургской Академии наук, М.—Л., 1962, т. 29—30.

³ См. М. И. Раловский, М. В. Ломоносов и Петербургская Академия наук, М.—Л., 1961.

Հիմնական ուղին, Այդ ժամանակահատվածում Ակադեմիայի անդամների գործունեությունը կենտրոնացված էր հիմնականում մաթեմատիկական և բնական գիտությունների բնագավառում: Մի շարք արժեքավոր հետազոտություններ կատարեցին աստղագետ Ս. Յա. Ռումովսկին, մաթեմատիկոս Ս. Կ. Կոտելնիկովը, հանրաբան և քիմիկոս Վ. Մ. Սերյոգինը: XVIII դարում Ակադեմիան մեծ ուշադրություն էր նվիրում Ռուսաստանի բնական հարստությունների և բնակչության կազմի ուսումնասիրությանը: Այդ ասպարեզում բեղմնավոր աշխատանք էին կատարում բնախույզներ Ս. Պ. Կրաշենինիկովը, Պ. Ս. Պալլասը, Ի. Ի. Լեպյոխինը: Կազմակերպվում են ժամանակի մասշտաբներով վիթխարի գիտարշավներ դեպի Ռուսաստանի Եվրոպական և Ասիական մասերի քիչ ուսումնասիրված ռեգիոնները: Կատարված հետազոտությունների հիման վրա Ակադեմիան նախապատրաստեց ու հրատարակեց կարևոր աշխատություններ աշխարհագրության, բուսաբանության, կենդանաբանության, ազգագրության վերաբերյալ: Դրանցից էին՝ «Ռուսաստանի ատլասը», Ս. Պ. Կրաշենինիկովի «Կամչատկա երկրի նկարագրություն» աշխատությունը և այլն:

Հետադոտական աշխատանքի ընդլայնմանը և խորացմանը զուգընթաց մեծանում էր Գիտությունների և գեղարվեստների ակադեմիայի միջազգային հեղինակությունը: Եվրոպայի գիտական աշխարհը լարված ուշադրությամբ հետևում էր Ռուսաստանում տեղի ունեցող փոփոխություններին և աստիճանաբար կարգավորում կապերը գիտական նոր կենտրոնի հետ: XVIII դարի վերջին Պետերբուրգի ակադեմիան կայուն կապեր հաստատեց Բեռլինի գիտությունների ակադեմիայի, Փարիզի համալսարանի, Անգլիայի արքայական ընկերության, Շվեդիայի գիտությունների ակադեմիայի, Բելգիայի գիտությունների և գրականության արքայական ակադեմիայի, Ամսթերդամի գիտությունների և արվեստների ակադեմիայի հետ: Ռուսական ակադեմիան սխստեմատիկորեն տպագիր աշխատություններ, հավաքածուներ, ցուցանմուշներ էր փոխանակում վերոհիշյալ և ուրիշ գիտական հաստատությունների հետ:

XIX դարը Ակադեմիայի գործունեության մեջ շատ նորություններ մտցրեց: Նա ազատվեց ուսումնական ֆունկցիաներից և «գեղարվեստներով» զբաղվելուց: Վերջնականապես ձևավորվեցին Ակադեմիայի բաժանմունքները՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների, ռուսաց լեզվի ու գրականության, պատմա-բանասիրական գիտությունների: Ակադեմիկոսները իրավունք ստացան ընտրել նոր անդամներ (որոնք պարտադիր կարգով պետք է հաստատվեին կայսեր կողմից) և մասնակցել Ակադեմիայի ղեկավարմանը: Աստիճանաբար մեծանում էր ակադեմիական գիտական հիմնարկությունների ցանցը: Նյութական մեծ գովարություններ հաղթահարելով, Ակադեմիան, համեստ սահմաններում, ձևոր էր բերում սարքավորումներ, կառուցում շենքեր, ստեղծում անհրաժեշտ օժանդակ ծառայություններ: Այդ ժամանակաշրջանում է կազմակերպվել Պուլկովոյի աստղագիտարանը, հիմնադրվել են հանրաբանական, կենդանաբանական, բուսաբանական և ազգագրական թանգարանները, ստեղծվել են բաղմամբիվ լաբորատորիաներ: Կայունանում էր Ա-

⁴ Г. А. Князев, А. В. Кольцов, Եզվ. աշխ., էջ 29:

կաղեմիայի պոլիգրաֆիական բազան: Նյութական դժվարությունները չէին կարող կասեցնել հայրենական գիտության առաջընթացը:

XIX դարում Ակադեմիայում աշխատում էին շատ խոշոր գիտնականներ, որոնք աչքի ընկնող հաջողությունների էին հասել և մեծ ավանդ ներդրել համաշխարհային գիտության մեջ: Դա վերաբերում է նախ և առաջ ֆիզիկամաթեմատիկական գիտություններին: Մաթեմատիկայի զարգացման մեջ մի ամբողջ դարաշրջան կազմեցին Պ. Լ. Ջերիշևի աշխատությունները, մեծ նշանակություն ունեցան Մ. Վ. Օստրոգրադսկու, Վ. Յա. Բունյակովսկու գործերը: Ջի կարելի չհիշատակել նաև գիտության այնպիսի կորիֆեյներին, ինչպիսիք էին էլեկտրամագնսիզմի օրենքների հեղինակ է. Խ. Լենցը, զալվանուպլաստիկայի գյուտարար Բ. Ս. Յուկոբին, Պուլկովոյի աստղադիտարանի հիմնադիր, աստղագետ Վ. Յա. Ստրուվեն, վոլտյան աղեղի հայտնագործող Վ. Վ. Պետրովը: Հիմնարար գաղափարների անհամար հարստություն ներդրվեց քիմիայի և կենսաբանության բնագավառներում: Ա. Մ. Բուտլերովը հիմնավորեց քիմիական կառուցվածքի տեսությունը, որն ընկած էր օրգանական քիմիայի հիմքում: Կյանքի մասին գիտության ասպարեզում համաշխարհային հռչակ են վայելում ռուս շատ կենսաբանների անուններ: Կ. Մ. Բերը և Ի. Ի. Մեչնիկովը հանդիսացան էվոլյուցիոն սաղմնաբանության հիմնադիրները, Կ. Ա. Տիմիրյազևը հայտնաբերեց ֆոտոսինթեզի օրենքները, Ի. Պ. Պավլովը սկիզբ դրեց պսիխիկայի և գիտակցության երևույթների նոոբեռնմանը: Լիակատար իրավունքով կարող ենք հպարտանալ ռուս երկրախույզների հայտնագործություններով: XIX դարում աշխարհագրական գիտությունը հարստացավ ֆունդամենտալ հետազոտություններով, որոնք շատ «սպիտակ» բծեր չնշեցին մեր հայրենիքի և աշխարհի այլ ռեգիոնների քարտեզի վրայից: Անցյալ դարի խիզախ ճանապարհորդների ու գիտնականների շարքին են դասվում Ն. Մ. Պրժևալսկին և ուրիշներ:

Մեծ տեղաշարժեր կատարվեցին պատմագիտության մեջ: Հայրենի պատմության վերաբերյալ հրապարակ եկան խոշոր, ընդհանրացնող աշխատություններ: Դրանց թվին են պատկանում Ն. Մ. Կարամզինի «Ռուսական պետության պատմություն», Ս. Մ. Սոլովյովի «Ռուսաստանի պատմությունը հրենագույն ժամանակներից սկսած» աշխատությունները: Հետաքրքիր ուսումնասիրություններ կատարեցին ակադեմիկոսներ Պ. Պ. Պեկարսկին, Վ. Օ. Կլյուչևսկին, Ա. Ս. Լապպո-Դանիլևսկին և ուրիշներ:

Չնայած հայրենական գիտնականների հսկայական հաջողություններին, նախահեղափոխական շրջանում, երկրի տնտեսական հետամնացության, ինքնակալության ռեակցիոն քաղաքականության պատճառով ռուսական գիտությունն, այնուամենայնիվ, պատշաճ զարգացում չստացավ: Ռուս ակադեմիկոսների, Ակադեմիայի թղթակից-անդամների բազմաթիվ հայտնագործություններ ու գյուտեր հայրենիքում կիրառում չգտան: Գիտությունը կտրված էր ժողովրդից: Ակադեմիան գլխավորելու համար կառավարությունը հաճախ նշանակում էր ցարակսն ընտանիքի և բյուրոկրատական ավագանու՝ գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող ներկայացուցիչների: «Ժողովրդի մեջ կուտակված հնարավորությունների, դեպի գիտությունը լայն մասսաների ունեցած ձգտման և կառավարական օժանդակության բացակայության միջև ձգած խզումը առանձնապես սրվեց ռուսական գիտության նախահեղափո-

խական վերջին տասնամյակներում»⁵, — գրել է ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Ս. Ի. Վավիլովը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր դարաշրջան բացեց նաև հայրենի գիտության զարգացման մեջ: Կուլտուրայի ողջ հարստությունն այսուհետև պատկանում էր ժողովրդին, ի սպաս էր դրվում սոցիալիզմի կառուցմանը: «Առաջ ամբողջ մարդկային խելքը, նրա ամբողջ հանճարն ստեղծագործում էր միմիայն նրա համար, որպեսզի մի կարգ մարդկանց տա տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր բարիքները, իսկ մյուսներին ղրկի ամենաանհրաժեշտից՝ լուսավորությունից ու զարգացումից: Իսկ այժմ տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները դառնալու են համաժողովրդական սեփականություն, և այսուհետև մարդկային խելքն ու հանճարն էլ երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի»⁶:

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից Գիտությունների ակադեմիան սկսում է վերակառուցել իր գործունեությունը: Իհտական հետազոտությունները դառնում են համապետական գործ, կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության մշտական հոգատարության առարկա: «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը նոր կյանք ներշնչեց հին Ակադեմիային, նոր իմաստ և նշանակություն տվեց նրան, վերջապես անխղիճորեն կապեց ժողովրդի հետ»⁷, — ասել է Ս. Ի. Վավիլովը 1949 թ.: Ակադեմիան վերածվեց մի հաստատության, որ մատչելի էր բոլոր ընդունակ գիտնականների համար: Ակադեմիայի գործունեության՝ նախկինում հաճախ վերացական, երկրի կարիքների հետ կապ չունեցող բնույթը արմատապես փոխվեց: Նոր կարգերի պայմաններում գիտության և պրակտիկայի մեծ դաշինքը հաղթանակեց:

Ակադեմիայի երկրորդ ծենդյան ակունքների մոտ կանգնած էր կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը: Գիտությունը նա դիտում էր որպես մի հզոր լծակ, որի օգնությամբ կարելի է վերակառուցել երկրի էկոնոմիկան և կուլտուրական կյանքը: Չնայած իր զբաղվածությանը, Վ. Ի. Լենինը մեծ տեղադրություն էր հատկացնում Ակադեմիայի գործունեությանը, հետաքրքրվում էր առանձին գիտնականների բախտով: 1918 թ. նա կազմում է «Գիտա-տեխնիկական աշխատանքների պլանի ուրվագիծ», որտեղ տրված էր գիտության ուժերը երիտասարդ սովետական հանրապետության տնտեսական վերափոխման մեջ ներգրավելու ծավալուն ծրագիրը, ձևակերպված էին Գիտությունների ակադեմիայի խնդիրները: «Գիտությունների ակադեմիային, — գրել է Վ. Ի. Լենինը, — որն սկսել է Ռուսաստանի բնական արտադրողական ուժերի սխառեմատիկ ուսումնասիրությունն ու հետազոտությունը, ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի կողմից պետք է տալ հետևյալ հանձնարարությունը. մասնագետներից կազմել մի շարք հանձնաժողովներ, Ռուսաստանի արդյունաբերության վերակազմության և տնտեսական վերելքի պլանը հնարավորության չափով ելի արագ մշակելու համար»⁸: Վ. Ի. Լենինը բացառիկ հետաքրքրություն

⁵ С. И. Вавилов, Собр. соч., т. III, М., 1956, էջ 435:

⁶ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, Երևան, 1951, էջ 589—590:

⁷ С. И. Вавилов, նշվ. աշխ., էջ 516:

⁸ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, Երևան, 1951, էջ 389:

էր ցուցաբերում գիտութեան կարիքների, ակադեմիական հիմնարկների, նրանց աշխատողների գործունեության համար անհրաժեշտ սլայմաններ ստեղծելու նկատմամբ⁹։ Երկրի կյանքում ամենադժվարին տարիներին անգամ սովետական կառավարությունը միջոցներ էր հատկացնում գիտության զարգացման համար։ Դեռևս քաղաքացիական կռիվների և իմպերիալիստական ինտերվենցիայի շրջանում միջոցառումներ էին իրականացվում Ակադեմիայի նյութական բազայի ամրապնդման ուղղությամբ։ Սկսվում է նոր ինստիտուտների, լաբորատորիաների և դիտական այլ օժանդակ ծառայությունների շինարարությունը։ Սովետական իշխանության առաջին տարիներին բացվեցին ֆիզիկա-մաթեմատիկական ինստիտուտը, ռադիոմի ինստիտուտը, բիմիական ինստիտուտը, Վ. Վ. Դոկուչանի անվան հողի ինստիտուտը, ֆիզիոլոգիայի ինստիտուտը, բիոքիմիական և բիոգեոքիմիական լաբորատորիաները և այլն¹⁰։ Գիտությունների ակադեմիան, իր պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Պ. Կարպինսկու ղեկավարությամբ լայն ճակատով հետազոտական աշխատանքներ է ծավալում, որոնց նպատակն էր արտադրողական ուժերի անշեղ բարձրացումը։ 1919 թ. աշխատանքներ են սկսվում Կուրսկի մագնիսական անոմալիայի, Կուլայի թերակղզու, Կարա-Բոլազ-Գոլ ծոցի ռեսուրսների ուսումնասիրության ուղղությամբ¹¹։ Գիտությունների ակադեմիայի աշխատակիցները ակտիվորեն մասնակցեցին հռչակավոր ԳՈՒԼՈՒ-ի պլանի մշակմանը¹²։ Ժողկոմսովետի կողմից 1920 թ. մարտին հաստատված այդ փաստաթուղթը դարձավ երկրի տնտեսական շինարարության առաջին հեռանկարային ծրագիրը։ Նոր սկզբունքներով Ակադեմիայի վերակառուցումը ուղեկցվում էր նրա գործունեության ոլորտի ընդլայնումով։ Քննարկվող հարցերը դուրս են գալիս ակադեմիական սահմաններից և ստանում համապետական նշանակություն։ Ակադեմիան սկսում է մյուս հիմնարկություններին օգնություն ցույց տալ դիտական ուսումնասիրությունների կազմակերպման գործում, աջակցել համալսարանների և բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքին, կատարել կոորդինացնող խնդիրներ։ Տեղի ունեցած փոփոխությունները հաշվի առնելով, ՍՍՀՄ Կենտրոնական և Ժողկոմսովետը 1925 թ. ընդունեցին «Ռուսական գիտությունների ակադեմիան ՍՍՀՄ բարձրագույն դիտական հիմնարկություն ճանաչելու մասին» որոշումը, որի կապակցությամբ այն վերանվանվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության գիտությունների ակադեմիա¹³։

Վերականգնման շրջանի ավարտից հետո ՍՍՀՄ-ը սլայմական զարգացման նոր ժամանակաշրջան թևակոխեց։ Լարված սլայքար ծավալվեց սոցիալիստական հասարակության կառուցման համար։ Անց էր կացվում երկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը, վիթխարի աշխատանք էր տարվում կուլտուրայի և կրթության հետագա վերելքի ուղղությամբ։

⁹ Տե՛ս «Ленин и Академия наук». Сборник документов, М., 1969, т. 2 23—106:

¹⁰ Տե՛ս А. В. Кольцов, Ленин и становление Академии наук как центра советской науки, Л., 1969, т. 2 232—236:

¹¹ Տե՛ս «Ленин и Академия наук», т. 2 109—131, 185—205:

¹² Տե՛ս М. В. Келдыш, Многонациональный Союз Советских Социалистических Республик и развитие науки, «Наука Союза ССР», М., 1972, т. 2 9:

¹³ Г. А. Князев, А. В. Кольцов, նշվ. աշխ., т. 2 83:

Այդքան մասշտաբային և սոցիալական նշանակությամբ այդքան խոր խնդիրների լուծումը գիտության հնարավորությունների առավելագույն օգտագործում պահանջեց: 1927 թ. հունիսին ՍՍՀՄ Ժողկոմսովետը հաստատեց Գիտությունների ակադեմիայի նոր կանոնադրությունը, որը փոխարինելու էր 1836 թ. կանոնադրությանը¹⁴: Այդ փաստաթղթով սահմանվում էին Ակադեմիայի գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները, Տեսական պրոբլեմների մշակման հետ միաժամանակ կանոնադրության մեջ մեծ ուշադրություն էր հատկացվում գիտության կիրառական նշանակությանը: Ակադեմիայի առաջ խնդիր էր դրվում ուսումնասիրությունների արդյունքները էֆեկտիվ կերպով կիրառել երկրի ժողովրդական տնտեսության մեջ:

Սոցիալիստական շինարարության պրակտիկային մոտենալու ուղղությամբ Ակադեմիայի կատարած շրջադարձը ուղեկցվում էր նրա գիտական և կազմակերպչական գործունեության կատարելագործմամբ: 1929—1932 թթ. ընթացքում Ակադեմիայի կազմում ընտրվեցին շատ ականավոր գիտնականներ, ինչպես նաև խոշոր ինժեներներ և հասարակական գործիչներ: Ակադեմիայի ասպիրանտուրան սկսում է սիստեմատիկ կերպով գիտական կադրեր պատրաստել: 1931 թ. Ակադեմիան անցնում է գիտա-հետազոտական աշխատանքների պլանավորմանը¹⁵: ՍՍՀՄ Ժողկոմսովետի որոշմամբ 1934 թ. Ակադեմիան լենինգրադից փոխադրվում է մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվա¹⁶: Նախապատերազմյան հնազամյակների տարիներին ակադեմիական գիտական հիմնարկությունների ցանցի ընդլայնման գործում հսկայական թոփք է կատարվում: 1930-ական թթ. սկզբին կազմակերպվում են արևելագիտության ինստիտուտը, կենդանաբանական, էներգետիկ, պատմա-հնագիտական ինստիտուտները, արդեն գոյություն ունեցող մի քանի հանձնաժողովների բազայի վրա ստեղծվում է արտադրողական ուժերի ուսումնասիրության խորհուրդը¹⁷: 1930-ական թթ. կեսերին Ակադեմիայի ցանցում ստեղծվում են թե՛ բնատեխնիկական և թե՛ հումանիտար ուղղության բազմաթիվ հետազոտական հիմնարկներ: Այդ թվում՝ ֆիզիկական պրոբլեմների, վառելիք-հանածոների, ֆիզիկայի, բիոքիմիայի, ինչպես նաև տնտեսագիտության, պատմության, փիլիսոփայության, սովետական շինարարության ու իրավունքի ինստիտուտները և այլն¹⁸: Այդ ժամանակահատվածում տեղի է ունենում գիտության «աշխարհագրական քարտեզի» արմատական վերաձևում: Ինչպես հայտնի է, նախահեղափոխական Ռուսաստանում գիտությունը կենտրոնացած էր հիմնականում երկու քաղաքներում՝ Պետրոգրադում և Մոսկվայում: Սկսվում է գիտության պլանաչափ «տարաբնակեցումը» ողջ երկրում: Դեռևս 1919 թ. ստեղծվել էր Ուկրաինայի գիտությունների ակադեմիան, իսկ 1929 թ. հիմնադրվում է Բելոռուսական ՍՍՀ գիտությունների ակադեմիան: 1932 թ.

¹⁴ «Собрание законов и распоряжений Рабоче-крестьянского правительства СССР», 1927, № 35, էջ 367:

¹⁵ В. Д. Е с а к о в, Советская наука в годы первой пятилетки, М., 1971, էջ 208:

¹⁶ «Собрание законов и распоряжений Рабоче-крестьянского правительства СССР», 1934, № 22, էջ 175:

¹⁷ «220 лет Академии наук СССР». Справочная книга, М.—Л., 1945, էջ 270—271, 203—208, 228—229, 243—244, 275—277:

¹⁸ Նույն տեղում, էջ 135—136, 229—230, 131—132, 199—200, 258—259, 243—244, 248—249:

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան կազմակերպում է իր առաջին ֆիլիալները՝ Ուրալյան, Հեռավորարևելյան և Անդրկովկասյան¹⁹։ Գրեթե միաժամանակ գիտությունների ակադեմիայի բազաներ են առաջանում Երկրի տարրեր մասերում՝ Ղազախստանում, Տաջիկստանում և Կոլայի թերակղզու վրա։ Այնուհետև ստեղծվում են ՍՍՀՄ ԳԱ վրացական, Ադրբեջանական, Հայկական և Տաջիկական ֆիլիալները, ապա նաև Լիտվական ՍՍՀ գիտությունների ակադեմիան և վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիան²⁰։

Ակադեմիայի գործունեության մասշտաբների ընդլայնման ընթացքում աճում էր գիտական աշխատողների քանակը։ Պարբերաբար անցկացվող ընտրությունների շնորհիվ Ակադեմիան համալրվում էր Երկրի առավել աչքի ընկնող գիտնականներով։ 1936 թ. ամռանը ակադ. Ա. Պ. Կարպինսկու մահվան կապակցությամբ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ է ընտրվում ակադ. Վ. Լ. Կոմարովը։ Նրա ղեկավարությամբ շարունակվում են գիտական հետազոտությունների կառավարման սխեմի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները։ 1938 թ. նպատակահարմար է գրտնրվում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայում ստեղծել ութ բաժանմունք՝ ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական, տեխնիկական գիտությունների, պատմության և փիլիսոփայության, տնտեսագիտության և իրավունքի, գրականության և լեզվի²¹։ Ստեղծագործական որոնումները և գիտության կառավարման կատարելագործումը Ակադեմիան դուրս բերեցին ժողովրդին ծառայելու լայն ճանապարհը։ Գիտությունների ակադեմիայի և ժողովրդական տնտեսության միջև գոյացած օրգանական կապերը առաջին հնգամյակների տարիներին լավ քննություն բռնեցին։

Սովետական գիտնականների անձնագոհ աշխատանքը հարստացրեց գիտության բազմաթիվ ճյուղերը, հսկայական օգուտ տվեց սոցիալիստական շինարարության պրակտիկ խնդիրների լուծման գործին։ Հաջողությամբ էին աշխատում մաթեմատիկոսներն ու ֆիզիկոսները։ Գիտության այս բնագավառներում խոշոր հայտնագործություններ կատարվեցին։ Ակադ. Ի. Մ. Վինոգրադովը գտավ կենտ թվերի համար Գոլդբախի թեորեմի լուծման մեթոդը։ Երիտասարդ ֆիզիկոս Պ. Ա. Չերենկովը, ակադ. Ս. Ի. Վավիլովի ղեկավարությամբ շատ նորություններ մտցրեց ռադիոակտիվ ճառագայթման ներգործության տակ մաքուր հեղուկների լուսարձակման օրենքների բացահայտման մեջ։ Ե. Ի. Տամմը հիմնավորեց պինդ մարմիններում լույսի ցրման քվանտային տեսությունը։ Ռադիոմի ինստիտուտի աշխատակիցներ Ե. Ա. Պետրժակը և Գ. Ն. Ֆլերովը հայտնաբերեցին ուրանի ատոմի միջուկների ինքնաբերաբար տրոհումը։ Այս և ուրիշ շատ հայտնագործություններ մեծ ավանդ ներդրեցին ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների զարգացման մեջ։ Զարգացման նոր փուլ էին ապրում քիմիան և կենսաբանությունը։ Ա. Ե. Ֆավորսկու, Ն. Դ. Զելինսկու, Ն. Ս. Կուրնակովի, Պ. Ա. Ռեբինդերի այդ ժամանակ ձևավորված դպրոցները հաջողությամբ մշակում էին բարդ քիմիական պրոբլեմներ։ Ակադ. Ն. Ն. Սեմյոնովը ճյուղավորված շղթայական ռեակցիաների ժամանա-

¹⁹ Н. М. Митрякова, Т. М. Черникова, Академия наук СССР и науч.-ное строительство в советских республиках. «Вестник АН СССР», 1972, № 12, էջ 110։

²⁰ Նույն տեղում, էջ 116։

²¹ «Вестник АН СССР», 1938, № 9—10, էջ 82։

կակից տեսության հիմքերը դրեց, որի համար հետազոտում արժանացալ նոբելյան մրցանակի: Գենի և ժառանգականության բնույթի ուսումնասիրության ասուարեզում հսկայական աշխատանք կատարեց ակադ. Ն. Բ. Վավիլովը: Ակադ. Ի. Պ. Պավլովի, իսկ նրա մահից հետո (1936)՝ ակադ. Լ. Ա. Օրբելու ղեկավարությամբ շարունակվում էին բարձրագույն նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի հետազոտման ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք զբաղեցին ամբողջ աշխարհի գիտնականների ուշադրությունը: Գիտական և պրակտիկ մեծ նշանակություն ունեին Ակադեմիայի կազմակերպած երկրաբանական-աշխարհագրական հետազոտությունները: Գիտնականների մի մեծ բանակ սիստեմատիկ աշխատանք էր տանում երկրի բնական հարստությունները հետախուզելու ուղղությամբ: Ակադ. Բ. Մ. Գուբկինի ղեկավարությամբ հաջողությամբ զարգանում էր նավթային երկրաբանությունը: Բացահայտված օրինաչափությունների հիման վրա հայտնաբերվեցին նավթի նոր հանքավայրեր, մասնավորապես, այսպես կոչված «երկրորդ Բաքուն»: Ակադ. Օ. Յու. Շմիդտի զլխավորությամբ աշխարհագրական արշավախմբեր կազմակերպվեցին բևեռային շրջանները հետազոտելու նպատակով: Աշխարհն ականատես եղավ սովետական մարդկանց հերոսական թռիչքին դեպի Հյուսիսային բևեռ և խիղախ հետազոտող-պապանինականների գրեյֆին՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում: Զգալիորեն բարձրացավ հումանիտար գիտությունների դերը: Մեր հայրենիքի պատմության, նրա ժողովուրդների լեզվի և ազգային գրականությունների հանդեպ եղած հետաքրքրությունը հասարակական լայն արձագանք գտավ: Ժամանակի պահանջին հետևելով, Ակադեմիայի ինստիտուտները հետազոտական եռանդուն աշխատանք ծավալեցին զրեթե բոլոր հասարակագիտական դիսցիպլինաների դժուր: Գիտնականների ջանքերով պատրաստվեցին և հրատարակվեցին արժեքավոր շատ աշխատություններ, որոնք մինչև օրս չեն կորցրել իրենց նշանակությունը: Դրանց թվում են ակադեմիկոսներ Վ. Վ. Բարտոլդի, Բ. Գ. Գրեկովի, Բ. Յու. Կրաչկովսկու, Վ. Վ. Ստրովելի, Ե. Վ. Շարլեի գործերը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից մինչև ՍՍՀՄ-ի վրա ֆաշիստների ուխտադրուժ հարձակումը սովետական գիտությունը մեծ ուղի անցավ: Դա գիտությունների ակադեմիայի քանակական և որակական անշեղ աճի ժամանակաշրջանն էր: ՍՍՀՄ ԳԱ աշխատողների թիվը 1917 թ. 220-ի դիմաց 1940 թ. հասել էր 16335-ի, ըստ որում գիտական աշխատողներին 109-ից հասել էր 4700-ի²²: Առ 1-ը հունվարի 1941 թ. Ակադեմիան իր տրամադրության տակ ուներ 76 ինստիտուտ և այլ գիտական հիմնարկներ, ինչպես նաև մեծ թվով լաբորատորիաներ, աստղագիտարաններ և կայաններ²³:

Պատերազմը հսկայական վնաս հասցրեց սովետական գիտությանը: Ակադեմիայի նորմալ գործունեությունը խափանվեց: Նրա հիմնարկներից շատերը հայտնվեցին ռազմական գործողությունների գոտում, ենթարկվում էին սիստեմատիկ ռմբակոծությունների և հրետանային գնդակոծության: Ոչնչացվեցին արժեքավոր սարքավորումներ, գործիքներ, զրբեր: Երբ թշնամին մոտեցավ երկրի կենսականորեն կարևոր կենտրոններին, ակադեմիական

²² Г. Д. Комков, О. М. Карпенко, Б. В. Левшин, Л. К. Семенов. Академия наук СССР—штаб советской науки. М., 1968, էջ 56:

²³ Г. А. Князев, А. В. Кольцов, նշվ. աշխ., էջ 119:

հիմնարկները հարկադրված եղան էվակուացվել արևելյան շրջանները: Գիտական կապերի կազմավորված սիստեմը խախտվեց, իսկ Ակադեմիայի ինստիտուտները ցրվեցին երկրով մեկ: Բավական է ասել, որ 1942 թ. սկզբին Ակադեմիայի հիմնարկները տեղավորված էին ՍՍՀՄ 45 կետերում²⁴: Սակայն չնայած բոլոր դժվարություններին, Ակադեմիան շարունակում էր ապրել, աշխատել և պայքարել հստակ, հաղթանակի: «Պատերազմի տարիները եղան ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գիտական հզորության պատմական ասուղարբը», — ասել է ակադեմիայի պրեզիդենտ Վ. Լ. Կոմարովը նրա 220-ամյակին նվիրված հոբելյանական նիստում 1945 թ.²⁵: Գիտնականների մի զգալի մասը մեկնել էր ռազմաճակատ և զենքը ձեռքին պաշտպանում էր մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը: Թիկունքում մնացածները բազմապատկված եռանդով շարունակում էին աշխատել:

Ակադեմիայի գործունեությունը վերակառուցվեց պատերազմական ժամանակի պահանջներին համապատասխան, լիովին ենթարկվելով թշնամուն ջախջախելու խնդրին: Զկար պաշտպանական աշխատանքի այնպիսի տեղամաս, որտեղ շփոթեին գիտության ներկայացուցիչները: Գիտնականները ստեղծում էին ռազմական տեխնիկայի նոր նմուշներ, կատարելագործում էին արդյունաբերական արտադրության տեխնոլոգիան, նախագծում էին պաշտպանական օբյեկտների շինարարությունը, օգնում էին տրանսպորտի և գյուղատնտեսության աշխատողներին: Գիտնականների մի քանի հանձնաժողովներ աշխատում էին մետաղի, վառելանյութի լրացուցիչ հանքավայրեր, էլեկտրաէներգիայի աղբյուրներ հայտնագործելու ուղղությամբ: «Դեռ երբեք գիտնականների մոտ այդպիսի մեծ ստեղծագործական ավյուն չէր եղել: Այն բնորոշվում էր սովետական գիտության բոլոր բնագավառները: Սովետական ֆիզիկոսները տեսական և փորձնական նախադրյալներ էին ստեղծում սպառազինության նոր տեսակների ստեղծման համար. մաթեմատիկոսները առավելագույն արագ հաշվումների եղանակներ մշակեցին հրետանու, ավիացիայի և ռազմանավերի համար. քիմիկոսները պայթուցիկ նյութերի, ձուլվածքների, ղեղադործական միջոցների արտադրության նոր եղանակներ գտան. կենսաբանները Կարմիր բանակի և բնակչության համար սրնդի լրացուցիչ ռեսուրսներ հայտնաբերեցին. բժիշկները զինվորական բժշկության նոր մեթոդներով մարտիկների տասնյակ հազարավոր թանկագին կյանքեր փրկեցին: Մենք հպարտանում ենք նրանով, որ ուժերը ներածին չափ օգնել ենք մեր պանծալի Կարմիր բանակին և Ռազմա-ծովային նավատորմին, որոնք ջախջախեցին գերմանա-ֆաշիստական զավթիչներին», — ասել է Վ. Լ. Կոմարովը 1945 թ.²⁶:

Պատերազմի տարիներին նոր ջանքեր գործադրվեցին ծայրամասերում գիտությունը զարգացնելու ուղղությամբ: Ստեղծվեցին ՍՍՀՄ ԳԱ Կիրգիզական և Արևմտա-սիբիրյան ֆիլիալները: Նույն ժամանակ, ՍՍՀՄ ԳԱ որոշ ֆիլիալների բազայի վրա սկսեցին կազմավորվել հանրապետությունների գիտությունների ակադեմիաները: 1943 թ. բացվեցին Հայկական ՍՍՀ և Ուկ-

²⁴ Б. В. Левшин, Академия наук СССР в годы Великой Отечественной войны, М., 1966, էջ 18:

²⁵ «220 лет Академии наук СССР. Юбилейная сессия», т. I, М.—Л., 1948, էջ 70:

²⁶ Նույն տեղում:

բեկական ՍՍՀ, իսկ 1945 թ.՝ Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիաները²⁷։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի զարգացման նոր փուլի սկիզբը դրեց։ Նրա առաջ ծառայան խնդիրներ, որոնք սերտորեն կապված էին երկրի ժողովրդական տնտեսության վերականգնմանն օգնություն ցույց տալու հետ։ Նախատեսվում էր սեղմ ժամկետներում վերացնել այն խզումը, որ կար ՍՍՀՄ և առավել զարգացած կապիտալիստական երկրների գիտության զարգացման մակարդակների միջև։ Կոմունիստական կուսակցությունը սովետական գիտնականներին կոչ արեց առաջավոր դիրքեր գրավել համաշխարհային գիտության մեջ։ 1945 թ. ամռանը առողջական վիճակի պատճառով ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտի պոստից հեռացավ ակադ. Վ. Լ. Կոմարովը։ Ակադեմիայի ընդհանուր ժողովը այդ պաշտոնում ընտրեց ակադ. Ս. Ի. Վավիլովին։ Մինչև իր կյանքի վերջին օրերը նա աշխատեց որպես ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտ։ Նրա մահից հետո, 1951 թ. փետրվարին, պրեզիդենտ ընտրվեց ակադ. Ա. Ն. Նեսմեյանովը։ Գիտության զարգացումը հետպատերազմյան տարիներին շտեմնված բարձր տեմպերի հասավ։ 1945 թ. մինչև 1958 թ. գիտությունների ակադեմիան իր հիմնարկների ցանցն ընդարձակեց ավելի քան երկու անգամ։ Բացվեցին շուրջ հարյուր ակադեմիական նոր հաստատություններ²⁸։ Ստեղծվեցին ՍՍՀՄ ԳԱ Բաշկիրական, Արևելա-սիբիրյան, Կազանի և այլ ֆիլիալները։ Շատ ուժեր և միջոցներ ներդրվեցին միութենական հանրապետություններում գիտության զարգացման համար։ Գիտությունների ակադեմիաներ բացվեցին Լատվիական, էստոնական, Տաշկական, Թուրքմենական և Կիրգիզական հանրապետություններում։ 1961 թ. Մոլդավական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումից հետո միութենական հանրապետություններում գիտությունների ակադեմիաներ ստեղծելու պրոցեսն ավարտվեց²⁹։

Ակադեմիայի գիտական պոտենցիալի աճի հետ մեկտեղ ընդլայնվում և խորանում էր հետազոտական աշխատանքների ճակատը։ Գիտնականների ջանքերը կենտրոնացվում էին այնպիսի ակտուալ պրոբլեմների մշակման վրա, որոնք որոշում էին գիտության զարգացումը ամբողջությամբ վերցրած։ Ակադեմիայի հիմնական ուղադրությունն այդ շրջանում բևեռված էր ատոմի միջուկի էներգիային տիրապետելու և տիեզերական տարածությունները նրվաճելու հետ կապված ֆունդամենտալ հետազոտությունների վրա։

Գիտական հետազոտությունների ասպարեզում առաջին տեղերից մեկը մղվեց մաթեմատիկան։ Դա պայմանավորված էր այն բանով, որ մաթեմատիկական մեթոդները ներթափանցել էին գիտության բոլոր բնագավառները։ Առանց հաշվողական տեխնիկայի անհնար էր լուծել մակրո- և միկրոաշխարհի ուսումնասիրության հետ կապված բարդ խնդիրները։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան արժանի ավանդ ներդրեց մաթեմատիկայի ժամանակակից պրոբլեմների մշակման գործում։ Համաշխարհային հռչակ ստացան թվերի տեսության, տոպոլոգիայի, հավանականության տե-

27 Б. В. Левшин, *Узл.* աշխ., էջ 154, 156։

28 *Տե՛ս «Академия наук СССР»*. Краткий очерк истории и деятельности. М., 1968, էջ 50, 52։

29 *Տե՛ս «Народное образование, наука и культура в СССР»*. Статистический сборник, М., 1971, էջ 245։

սովյան և այլ ուղղություններով կատարված հետազոտությունները: Իսկական ծաղկման հասավ մաթեմատիկական տրամաբանության, ինֆորմացիայի տեսության և ծրագրավորման զարգացումը: Այս ամենը հնարավորություն տվեց հեղաշրջում կատարել հաշվողական տեխնիկայի մեջ: 1953 թ. ճշգրիտ մեխանիկայի և հաշվողական տեխնիկայի ինստիտուտում կառուցվեց առաջին հայրենական էլեկտրոնային հաշվիչ մեքենան³⁰:

Մեծ հաջողությունների հասան սովետական ֆիզիկոսները: Գիտնականները ձևակերպեցին և լուծեցին ատոմի միջուկի խորհրդավոր զաղտնիքների դրոշին: Ատոմի մեջ թաքնված վիթխարի էներգիան ազատելը և նրա պրակտիկ օգտագործումը օրակարգի հարց էր դարձել: Ատոմային ֆիզիկայի առաջընթացի գործում աչքի ընկնող դեր կատարեց ակադ. Ի. Վ. Կուրչատովը: 1949 թ. Սովետական Միությունը կատարեց ատոմային ումբի առաջին փորձարկումը: ԱՄՆ-ի մենաշնորհն այդ ասպարեզում վերացված էր: Չորս տարի անց սովետական գիտնականներն իրականացրեցին ջերմա-միջուկային ռեակցիան, Այնուհետև սկսվեց ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման դարաշրջանը: 1954 թ. շարք մտավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի՝ աշխարհում առաջին ատոմային էլեկտրակայանը 5 հազար կիլովատ հզորությամբ: Իսկապես դարաշրջան բացող նշանակություն ունեցան սովետական գիտնականների հետազոտությունները տիեզերական տարածությունների յուրացման գործում: Այդ բնագավառում հաջողությունները հնարավոր «դարձան բոլոր գիտությունների զարգացման բարձր մակարդակի շնորհիվ: Ակադեմիան, նրա ինստիտուտները շատ բան արեցին, որպեսզի իրականանա տիեզերք թափանցելու մասին մարդկության նվիրական երազանքը: 1957 թ. հոկտեմբերի 4-ին Սովետական Միությունում արձակվեց մեր քաղաքակրթության պատմության մեջ երկրի առաջին արհեստական արբանյակը: Տիեզերք թափանցելը բնության ուժերի նկատմամբ մարդկային բանականության տարած հաղթանակի փալուն օրինակ էր:

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը սկիզբ դրեց մեր երկրի զարգացման նոր փուլին: Զարգացած սոցիալիստական հասարակության պայմաններում գիտության դերն ու նշանակությունը էլ ավելի մեծացան: Խնդիր դրվեց սոցիալիստական հասարակարգի առավելությունները միավորել գիտատեխնիկական հեղափոխության, նվաճումների հետ: 1960-ական թթ. ՍՍՀՄ-ում գիտությունների ակադեմիայի կազմակերպչական կառուցվածքը և գիտական գործունեությունը ենթարկվեցին էական վերակառուցման, որի նպատակն էր՝ բարձրացնել հետազոտությունների էֆեկտիվությունը, գիտությունը մոտեցնել պրակտիկային, ձևեր բերված՝ արդյունքները ներդնել ժողովրդի նյութական և հոգևոր կյանքի բոլոր ոլորտները: 1961 թ. մայիսին լրացավ պրեզիդենտի պաշտոնում ակադ. Ա. Ն. Նևսեյանովի լինելու երկրորդ հնգամյա ժամկետը: ԳՍ. Բեդհանուր ժողովը բավարարեց նրա խնդրանքը՝ պրեզիդենտական պարտականություններից իրեն ազատելու մասին: ՍՍՀՄ ԳԱ նոր պրեզիդենտ դարձավ ակադ. Մ. Վ. Կելդիշը:

1961 և 1963 թթ. կուսակցության և կառավարության որոշումներով կարևոր միջոցառումներ ձևակերպվեցին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գործունեության բարելավման ուղղությամբ: Ակադեմիային առաջարկվում էր

³⁰ Տե՛ս «Большая Советская Энциклопедия», т. 5, изд. 3-е, էջ 571:

գիտնականների ջանքերը կենտրոնացնել գիտության առավել հեռանկարային և արագ զարգացող, երկրի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի վերելքին նպաստող ուղղությունների մշակման վրա: Նրան էր հանձնարարված միութենական մասշտաբով բնական և հասարակական գիտությունների զարգացման ղեկավարությունը: Ակադեմիայի առաջ մեծ խնդիրներ էին դրվում միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և ՍՍՀՄ մյուս գիտա-հետազոտական հիմնարկների աշխատանքները կոորդինացնելու և նրանց օգնություն ցույց տալու գործում³¹: ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գերբաժնացնելուն զուգընթաց սովետական պետությունը նյութական մեծ օժանդակություն էր ցույց տալիս նրան: Գիտական շինարարության համար առանձնացվում են լրացուցիչ միջոցներ: Դա հնարավորություն է տալիս իրականացնել գիտական ինստիտուտներից շատերի տեխնիկական վերասարքավորումը և վիժխարի կապիտալ շինարարություն ծավալել: Այդ տարիներին կազմակերպվում են մի քանի տասնյակ նոր ակադեմիական հիմնարկներ ու օժանդակ ծառայություններ՝ կապված ժամանակակից գիտության հեռանկարային ուղղությունների ուսումնասիրության հետ:

Գիտությունը հատկապես արագ էր զարգանում երկրի արևելյան շրջաններում: Սովետական կառավարության որոշմամբ 1957 թ. Նովոսիբիրսկում՝ ձեռնամուխ են լինում գիտական հզոր կենտրոնի շինարարությանը: Այստեղ կազմակերպվում է ՍՍՀՄ ԳԱ Սիբիրյան բաժանմունքը: Տասնհինգ տարի անց նրա կազմում արդեն կային 47 ինստիտուտներ և ինքնուրույն լաբորատորիաներ³²: Ուրալում և Հեռավոր Արևելքում գիտության զարգացման ասպարեզում էական փոփոխություններ կատարվեցին: 1969 թ. որոշում ընդունվեց այդ ուղիներում գիտական կենտրոններ ստեղծելու մասին: Ընդունված որոշումը կենսագործելու համար շատ քիչ ժամանակ պահանջվեց: 1970 թ. աշնանը տեղի ունեցավ Հեռավորարևելյան գիտական կենտրոնի, իսկ մոտավորապես կես տարի անց՝ Ուրալյան կենտրոնի բացումը:

Խոշոր շինարարություն էր տարվում նաև երկրի մյուս շրջաններում: Հարկ է հիշատակել Մոսկվայի տակ մասնագիտացված գիտական կենտրոններ հիմնելու մասին: Նոգինսկում ստեղծվեց պինդ մարմնի քիմիայի և ֆիզիկայի պրոբլեմների հետազոտումով զբաղվող գիտական կենտրոն, Պուշչինոյում՝ կենսաբանական պրոֆիլի, Պախրայում՝ ֆիզիկայի: Մասնագիտացված կենտրոնների նպատակն է վարդացնել գիտության համեմատաբար նոր ծագած ճյուղերը կամ գիտության մեջ նոր ուղղություններ մշակել:

Հուրջ փոփոխություններ տեղի ունեցան գիտության կառավարման սիստեմում: Գիտության դիֆերենցիացիայի պրոցեսը հանգեցրեց լրացուցիչ կառուցվածքային ենթաբաժանումների ստեղծմանը: 1963 թ. ՍՍՀՄ ԳԱ մասնագիտացված բաժանմունքների քանակը ավելացավ, հասնելով 16-ի: Դրանց ղեկավարման համար ԳԱ նախագահությունը կազմակերպեց ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների, քիմիկո-տեխնոլոգիական և կենսաբանական գիտությունների, հասարակական գիտությունների

³¹ СЛ՝ М. В. К е л д ы ш, նշվ. աշխ., էջ 29:

³² СЛ՝ «Новое время», 1973, № 39, էջ 23:

սեկցիաներ³³, 1968 թ. կազմակերպվում է նաև Երկրի մասին գիտությունների սեկցիան: Այս ամենն ապահովում է Ակադեմիայի հետադոտական աշխատանքի որակյալ և հստակ կառավարումը:

Ակադեմիայի գործունեության բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները ընդլայնեցին հետադոտական որոնումների հորիզոնը և հանգեցրին նոր նվաճումների: Մեծ և բազմազան են այդ տարիներին բնական և հասարակական գիտությունների բոլոր բնագավառներում սովետական գիտնականների ձեռք բերած հաջողությունները: Բայց հատկապես նշանակալից էին «գարի պրոբլեմներից» այնպիսի կարևորագույնների լուծումների արդյունքները, ինչպիսիք են միջուկային էներգիային տիրապետելը, տիեզերք թափանցելը, կառավարման պրոցեսների ավտոմատացումը:

Վերջին տարիների ընթացքում զգալիորեն ավելացել է ատոմի միջուկի և տարրական մասնիկների ֆիզիկայի բնագավառում տարվող ուսումնասիրությունների փորձարարական բազան: Շարք մտան 19 միլիարդ էլեկտրոն-վոլտսնոց պրոստոնային սինխրոֆազոտրոնը և 70 միլիարդ էլեկտրոն-վոլտանոց պրոտոնային սինխրոտրոնը: Նովոսիբիրսկում ստեղծված է հանդիպակաց փնջերով տեղակայք: Հզոր, կատարյալ տեխնիկական հնարավորություն տվեց անցկացվող հետադոտություններում բարձր արդյունքների հասնել: Իտնականները շատ բան են արել կառավարվող ջերմամիջուկային սինթեզի պրոբլեմի լուծման համար: Մասնավորապես, առաջարկվեց լազերի ճառագայթի օգնությամբ ջերմամիջուկային պարամետրերի պլազմա ստանալու հետաքրքիր զաղավարը: Շատ նորություններ ներմուծվեցին միջուկային էներգիայի բնագավառում: Այդ հետադոտությունների արդյունքները մարմնավորվեցին «Լենին» ատոմային սառցահատում, Բելոյարսկի և Նովովորոնեժի հզոր ատոմային էլեկտրակայաններում:

Բարձր աստիճանի էֆեկտիվությամբ շարունակում էլս իրականացվել տիեզերական հետազոտությունների ծրագիրը: Այդ ժամանակաշրջանում աշխարհն ականատես եղավ ՍՍՀՄ-ում անցկացվող գիտական փայլուն փորձարկումներին: 1961 թ. ապրիլի 12-ին տեղի ունեցավ Յու. Ա. Գագարինի՝ մարդկության պատմության մեջ առաջին տիեզերական թռիչքը: 108 րոպեի ընթացքում տիեզերադնացը պտույտ գործեց երկրազնդի շուրջը և բարեհաջող վայրէջք կատարեց տրված վայրում: Շուտով սովետական ավտոմատ կայաններն ու սարքերը հասան Լուսին և եղան նրա մակերևույթի վրա: Գիտնականների լաբորատորիաները հասցվեցին հազվագյուտ լուսանկարներ և լուսնային ապարներ, որոնք ընդլայնեցին մեր գիտելիքները մեր մերձավորագույն տիեզերական հարևանի մասին: Մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկվեց Վեներա մոլորակը: Հայրենական ավտոմատ սարքավորումները հասան նրա սահմաններին, հավաքեցին և երկիր հաղորդեցին արժեքավոր ինֆորմացիա: Հետազոտության ենթարկվեց Մարսը: «Մարս—2» և «Մարս—3» ավտոմատ կայանները, որոնք եղան մթնոլորտում, իսկ վերջինը նաև մոլորակի մակերևույթի վրա, օգնեցին բաց անել այդ մոլորակի շատ գաղտնիքներ: Երբ խոսք է գնում տիեզերական տարածություն ներթափանցելու ասպարեզում Սովետական Միության ձեռք բերած նվաճումների մասին, ապա

³³ Г. Д. Комков, О. М. Карпенко, Б. В. Левшин, Л. К. Семенов, *նշվ. աշխ.*, էջ 163—164:

անհրաժեշտ է նախ և առաջ հիշել հրթրային տեխնիկայի կոնստրուկտոր, ակադ. Ս. Պ. Կորոլյովի անունը: Լինելով անհատնում ստեղծագործական էներգիայի տեր մարդ, փայլուն կազմակերպիչ, ականավոր գիտնական, նա հանդես եկավ որպես առաջնակարգ տիեզերական թռչող սարքերի կոնստրուկտոր: Կորոլյովի ղեկավարությամբ ստեղծված տիեզերական տեխնիկան առավել անմահացրեց նրա անունը:

Գիտա-տեխնիկական առաջընթացի արագացմանը մեծ շահով նպաստեցին մաթեմատիկայի բոլոր ուղղություններով տարվող հետազոտությունները: Աշխարհում սուղաշավոր դիրքեր գրավեցին թվերի տեսության և հավանականության տեսության սովետական դպրոցները: Մեծ հաջողություններ ձեռք բերվեցին մաթեմատիկական տրամաբանության, հանրահաշվական տոպոլոգիայի, ֆունկցիոնալ անալիզի հետազոտության ասպարեզում: Ավելի բարձր աստիճանի հասցվեց հաշվողական մաթեմատիկան: ՍՍՀՄ ԳԱ ինստիտուտներն արժեքավոր արդյունքներ ստացան կառավարման պրոցեսների հետազոտության բնագավառում: Գիտնականները լուծեցին ավտոմատ կարգավորման, շծային և ոչ զծային տեսության, կառավարման օպտիմալ սխեմաների շատ պրոբլեմներ: Զգալի հաջողություններ կան մեծ սխեմաների կառավարման հաշվողական մեթոդների մշակման մեջ: Հսկայական վերելք է նկատվում հաշվիչ-լուծող մեքենաների նոր տեսակների ստեղծման գործում:

Անշեղ առաջընթացի ուղիով է գնում հասարակական գիտությունների զարգացումը: Հումանիտար հետազոտությունների ակտիվացման հարցում կարևոր դեր խաղաց ՍՄԿԿ Կենտկոմի «Հասարակական գիտությունների հետագա զարգացման և կոմունիստական շինարարության մեջ նրանց դերի բարձրացման միջոցառումների մասին» որոշումը, ընդունված 1967 թ.³⁴: Այդ որոշումը սահմանեց սոցիալ-տնտեսական և գաղափարական ակտուալ պրոբլեմների լուծման գործում տնտեսագետների, փիլիսոփաների, պատմաբանների, իրավագետների, գրականագետների հիմնական խնդիրները: Արձագանքելով կոմունիստական կուսակցության կողմից, Ակադեմիայի գիտնականները շոշափելի ավանդ ներդրեցին կոմունիստական շինարարության մարքս-լենինյան տեսության և պրակտիկայի մի շարք հարցերի մշակման մեջ: Ավելի սերտ դարձավ հասարակական գիտությունների կապը կյանքի հետ, արդիականության խնդիրների հետ: Այդ մասին է վկայում, մասնավորապես, այն մեծ գիտա-հետազոտական աշխատանքը, որ կատարեցին ՍՍՀՄ ԳԱ ինստիտուտները Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ծննդյան 150-ամյակի, Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի, ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ: Հասարակական բոլոր գիտությունների ընդհանուր վերելքի ֆոնի վրա նկատելի են սովետական պատմաբանների հաջողությունները: Վերջին տարիներին լայն ճակատով հետազոտական աշխատանքներ են ծավալվել հայրենական և համաշխարհային պատմության հանգուցային հարցերի շուրջ: Ֆունդամենտալ աշխատություններ են ստեղծվել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության վերաբերյալ, ավարտված է «Սիբիրի պատմության» հիմնատրյակի հրատարակու-

³⁴ Տե՛ս «КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК», т. 9, изд. 8-е, էջ 342—357:

2 Հանդես, № 3

թյունը, գիտական հասարակայնության բարձր գնահատականին է արժանացել «Աշխարհի ժողովուրդները» ազգագրական աշխատությունների մատենաշարը: Ամբողջ աշխարհում աչքի բնկնող ճանաչում են ստացել սովետական հնագետների հայտնագործությունները: Հսկայական գիտական նշանակություն ունեն բազմահատոր այնպիսի հրատարակությունները, ինչպիսիք են «ՍՍՀՄ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» և «Համաշխարհային պատմությունը»:

Գիտությունների ակադեմիայի հաջողություններն ըստ արժանվույն գնահատվել են կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կողմից: 1969 թ. նա արժանացավ բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի³⁵:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարը երկրի տնտեսական և սոցիալական վերելքի նոր փառահեղ բնագծեր նախանշեց: Միաժամանակ համագումարը բացառիկ ուշադրություն նվիրեց գիտությանը: Հարց բարձրացվեց գիտությունը հասարակության անմիջական արտադրողական ուժի վերածելու մասին: Հատկապես ընդգծվեց գիտության կարևորությունը համագումարի կողմից հաստատված խնդիրների իրականացման գործում: «Գիտության և տեխնիկայի տաջադիմությունը, — ասել է ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, — կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գլխավոր լծակն է»³⁶: Գիտությունը դիտելով որպես վիթխարի ստեղծագործ ուժ, կոմունիստական կուսակցությունը գիտնականների ջանքերն ուղղեց իններորդ հնգամյակի կատարման համար մղվող պայքարին մասնակցելու նպատակին: Համագումարը նշեց գիտա-հետազոտական աշխատանքի ծավալման գործում սովետական գիտության շտաբի ունեցած առանձնահատուկ նշանակությունը: ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան է «...սահմանում գիտական որոնումների ստրատեգիան, — ասվում է ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, — ի հայտ բերում առավել հեռանկարային, հասարակությանը հարկավոր հետազոտական աշխատանքների ուղղություններն ու ձևերը, միավորում երկրի գիտնականների ջանքերը»³⁷: Ամբողջ ժողովրդի հետ միասին սովետական գիտնականները խոր գոհունակությամբ ընդունեցին գիտա-տեխնիկական առաջընթացի՝ ՍՄԿԿ XXIV համագումարի առաջադրած ծրագիրը: Գիտությունների ակադեմիայի գիտնականների կոլեկտիվը մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղավ կուսակցության վիթխարի նախանշումների կենսագործմանը³⁸:

Ակադեմիայի իսկական գանձն են հերա գիտական կադրերը: 1917 թ. այնտեղ կային 100-ից քիչ ավելի գիտական աշխատողներ, իսկ այժմ աշխատում են 40 հազար գիտնականներ, այդ թվում՝ 240 ակադեմիկոս և 440 թրդ-թակից-անդամ: Ակադեմիայի աշխատակիցների թվում կան 4 Սովետական Միության հերոս, 142 սոցիալիստական աշխատանքի հերոս, 175 գիտության վաստակավոր գործիչ: Գիտության պարզացման ասպարեզում ձեռք բերված հաջողությունների համար գիտնականներից շատերը արժանացել են հայրենական և միջազգային բարձր մրցանակների: Լենինյան մրցանակները վե-

³⁵ «Правда», 14 III, 1969.

³⁶ «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 75:

³⁷ Նույն տեղում, էջ 114.

³⁸ М. В. Келдыш. Решения XXIV съезда КПСС и задачи Академии наук СССР. «Вестник АН СССР», 1971, № 7, էջ 3—23.

րականդնելու պահից (1957 թ.) սկսած ՍՍՀՄ ԳԱ 240 գիտնականներ արժանացել են այդ բարձր պարգևին³⁹։ 1967 թ. մինչև օրս ՍՍՀՄ սկսական մրր-դանակներ են ստացել 100-ից ավելի գիտական աշխատողներ։ Նորելյան մրցանակի դափնեկիրների շարքում կան ՍՍՀՄ ԳԱ 8 գիտնականների ա-նուններ⁴⁰։ Մեծ առաջընթաց է ապրել Ակադեմիայի հրատարակչական գոր-ծունեությունը։ Այն ոչ մի կերպ չի կարելի համեմատել անցյալի հետ։ Իր 200-ամյա գործունեության ընթացքում Ակադեմիան (մինչև համամիութենա-կան դառնալը) հրատարակել է ընդամենը 3 հազար անուն գիրք (այս թվի մեջ չեն մտնում ամսագրերը, հաշվետվությունները և այլ հրատարակույթու-ններ)։ Ներկայումս միայն Ակադեմիայի «Նասկա» հրատարակչությունը լույս է ընծայում 2 հազար անուն գիրք։ Նրանց ծավալը, ներառյալ ամսագրերի 1200 համարները, կազմում է 50 հազար հրատարակչական մամուլ⁴¹։ «Նաու-կա» հրատարակչությունը գրքեր է լույս ընծայում մարդկային գիտելիքների պրեթե բոլոր բնագավառների վերաբերյալ։ Նրա ամենամյա գրական արտա-դրանքի կեսից ավելին կազմում են ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, տեխնիկայի և բնական այլ գիտություն-ների վերաբերյալ մենագրությունները, տեղեկատուները, դասագրքերը, գի-տա-մասնագիտական գրքերը։ Գրականության այս տեսակի գերակշռությունը ար-տացում է գիտությունը հասարակության անմիջական արտադրողական ու-ժի վերածվելու օրինաչափ պրոցեսը։ Մեծ ուշադրություն է դարձվում նաև հասարակական-քաղաքական գրականության հրատարակմանը։ Հրատարակ-չությունը գրքեր է տպագրում պատմական, տնտեսագիտական, փիլիսոփա-յական, իրավաբանական, սոցիոլոգիական, բանասիրական, աշխարհագրա-կան թեմաներով։ Շատ գրքեր միացված են հատուկ մատենաշարերի մեջ։ Ներկայումս լույս է տեսնում ժամանակակից գիտության տարբեր բնագա-վառներին նվիրված ավելի քան 50 մատենաշար։ Ընթերցողների մեջ մեծ մասնաչափանություն են վայելում «Գրական հուշարձաններ», «Գիտության իլյաստրացիաներ», «Երկրորդ համաշխարհային պատերազմը ուսումնասիրություն-ներում, հիշողություններում և փաստաթղթերում» և այլ մատենաշարեր։ Ա-մեն տարի ավելի քան 1,5 միլիոն օրինակ ակադեմիական հրատարակություն-ներ (գրքեր և ամսագրեր) են տարածվում արտասահմանում։ Բացի այդ, շատ գրքեր և ակադեմիական ամսագրերի գրեթե կեսը վերահրատարակվում են արտասահմանյան ֆիրմաների կողմից⁴²։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը բարձր են գնահատել «Նասկա» հրատա-րակչության գործունեությունը։ 1973 թ. հրատարակչությունը պարգևատրո-վել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Արժատական փոփոխություններ են տեղի ունեցել Գիտությունների ա-կադեմիայի միջադպրային կապերի ընդլայնման ասպարեզում։ Փորձի փոխա-նակման, փոխադարձ օգնության, համատեղ ուսումնասիրությունների կադ-մակերպման իսկապես եղբայրական կապեր են հաստատվել Սովետական Միության և սոցիալիստական երկրների միջև։ Զգալիորեն ամրապնդվել են

39 Ըստ ՍՍՀՄ ԳԱ նախագահության կազմերի վարչության տվյալների։

40 Տե՛ս С. Г. Корнеев, Советские ученые—почетные члены иностранных на-учных учреждений, М., 1973, էջ 5, 116։

41 Տե՛ս «Вестник АН СССР», 1973, № 6, էջ 106—107։

42 Նույն տեղում, էջ 112։

Ակադեմիայի կապերը կապիտալիստական և նոր ղարկացող երկրների դիտարկումն կենտրոնների հետ: Ներկայումս ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան և միութենական հանրապետությունների ակադեմիաները կապեր են պահպանում աշխարհի ավելի քան 100 երկրների մոտ 4 հազար գիտական կազմակերպությունների հետ⁴³: Սովետական գիտնականները ակտիվորեն մասնակցում են համատեղ հետազոտությունների միջազգային կարևոր ծրագրերի իրականացմանը: ՍՍՀՄ ԳԱ և նրա հիմնարկների ներկայացուցիչները ավելի քան 150 միջազգային գիտական կազմակերպությունների անդամներ են: Սովետական գիտնականներից շատերը ընտրվում են այդ կազմակերպությունների ղեկավար օրգանների պրեզիդենտներ, վիցե-պրեզիդենտներ և անդամներ:

Ներկայումս ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան, ինչպես և ողջ սովետական գիտությունը աննախընթաց ծաղկում են ապրում: Դա սոցիալիստական հասարակարգի անվիճելի առավելության արդյունքն է: «ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գործունեությունը,— ասվում է ՍՄԿԿ Կենտկոմի «ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյա հոբելյանի մասին» որոշման մեջ,— ցայտուն կերպով ցուցադրում է սոցիալիզմի առավելությունները, որը գիտնականների առաջ գիտական որոնումների և ստեղծագործության, ամենաազնիվ և ամենամարդասիրական իդեալներին՝ կոմունիզմի և խաղաղության իդեալներին ծառայելու անսահմանափակ հնարավորություններ է բացել»⁴⁴: Սովետական գիտության և կուլտուրայի պարզացման, բարձրորակ գիտական կադրերի պատրաստման, երկրի տնտեսական և պաշտպանական հզորության ամրապնդման ասպարեզում ունեցած ծառայությունների համար և հիմնադրման 250-ամյակի առթիվ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով պարգևատրվել է Լենինի երկրորդ շքանշանով⁴⁵: Բուլղարական գիտության զարգացման և գիտական կադրերի պատրաստման, համալսարանային առաջադեմ գիտության զարգացման գործում մեծ ավանդ ներդնելու համար ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան Բուլղարական Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի հրամանագրով պարգևատրվել է Գերգի Իմիտրովի շքանշանով⁴⁶: Սովետական և համաշխարհային գիտության զարգացման մեջ ունեցած աչքի ընկնող ծառայությունների, Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության գիտության զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում մեծ ավանդ ներդնելու համար ՄԺՀ Ժողովրդական մեծ Խորալի հրամանագրով ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան արժանացել է հանրապետության բարձրագույն պարգևին՝ Սուխե Բատորի շքանշանին⁴⁷:

Շեշտակի և անհաղթահարելի է գիտության առաջընթացը: Վիթխարի են ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նվաճումները: Նրա գիտնականները մեծ ավանդ են ներդնում կոմունիստական հասարակության կառուցման համաժողովրդական գործում:

«ВОПРОСЫ ИСТОРИИ», 1974, № 5.

⁴³ «Академия наук СССР». Краткий очерк истории и деятельности, էջ 176:

⁴⁴ «Правда», 17. X. 1973.

⁴⁵ «Правда», 8. II. 1974.

⁴⁶ «Правда», 10. II. 1974.

⁴⁷ «Известия», 14. III, 1974.